ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

Կազմել է՝ համայնքի ղեկավար

Ռ. ՀՐ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հաստատվել է համայնքի ավագանու՝
03.04.2013թ. թիվ 8-Ա որոշմամբ

2013թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ
2. ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ
3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ
4. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ
5. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ
6. ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ և ՆՊԱՏԱԿԸ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Համայնքի 2013թ. բյուջեն մշակվել է՝ հիմք ունենալով համայնքի 2013թ., և հետագա տարիների զարգացման ծրագրերը:

Համայնքի գործունեությունը մեշապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական օգտագործումից:

Գալիք բյուջետային տարվա համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են

- Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ վերջնականապես ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները և բարձրացնելով սեփական եկամուտների և ապառքների հավաքագրման մակարդակը:
- Բարձրացնել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների որակական մակարդակը:
- Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, ջեռուցման, համակարգերի վերականգնման, գույքային վերազինման աշխատանքներ:
- Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բնակարանայյին-կոմունալ տնտեսության, բարեկարգման և ճանապարհային տնտեսության բնագավառներում:
- Աշխուժացնել համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքը:
- Ջրամատակարարման, ջրահեռացման, կոյուղագշորի և ոռոգման համակարգերը դարձնել ամբողջական և գործող:
- Համայքնը դարձնել բարեկարգ:
- Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր:

Ես դիմում եմ համայնքի բնակչությանը, ավագանուն, համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի 2013 թվականի բյուջեի միջոցների գոյացման, դրանց նպատակային օգտագործման, բյուջեի կատարման և վերահսկման ուղղությամբ:

Համայնքի բյուջեի կատարումը ծառայելու և ծառայեցվելու է Սևանի և սևանցիների համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1.1 Պատմական ակնարկ

Սևան համայնքը Գեղարքունիքի մարզի 5 քաղաքային համայնքներից մեկն է:
Բնակավայրը 1842թ-ին հիմնադրել են եկվոր ռուս աղանդավորները և կոչել են Ելենովկա՝ի պատիվ Պավել 1-ին ցարի աղջիկներից մեկի՝ Ելենայի: 1935թ. այն վերանվանվեց Սևան: 1961թ. բնակավայրին շնորհվեց շրջանային ենթակայության քաղաքի կարգավիճակ /մեկ ավանով և տասը գյուղով/, իսկ 1967թ.-ին՝ հանրապետական ենթակայության:

1.2 Ավանդույթներ

Սևանում նշվում է “ Քաղաքի օր”, “ Սևանի ձմեռ” , մի շարք համաքաղաքային տոներ և միջոցառումներ

1.3 Աշխարհագրական դիրքն ու բնակլիմայական պայմանները

- Հեռավորությունը մայրաքաղաք Երևանից- 60կմ
- Հեռավորությունը մարզկենտրոն Գավառից 40 կմ
- Բարձրությունը ծովի մակերևույթից 1925մ

Սևան քաղաքը գտնում է ծովի մակերևույթից 1925մ բարձրության վրա, Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին, Երևանից 65 կմ հեռավորության վրա: մարզկենտրոն Գավառից՝ 40 կմ: Կլիման խիստ մայրցամաքային է, ցուրտ ձմեռով: Տարվա եղանակային ջերմաստիճանը կազմում է -25-ից +30, մթնոլորտային տեղումների քանակը ՝ 450-500 մմ, արևային օրերի թիվը՝ 270:

Հայաստանի վարչատարածքային նոր բաժանմամբ Սևանը դարձավ ինքնուրույն համայնք և ներառում է Սևան քաղաքը, Ցամաքաբերդ, Գոմաձոր թաղամասերը, Գագարին բնակավայրը:

2005թ-ին հաստատվեցին համայնքի վարչական սահմանները, որի արդյունքում Սևան համայնքը զբաղեցնում է 1775.69հա հողատարածք:

Իր աշխարհագրական դիրքով Սևանը Հայաստանի ամենալեռնոտ շրջաններից է. գտնվում է Արեգունի, Փամփակի և Գեղամա լեռնաշղթաների հանգուցակետում:

Համայնքն իր ափամերձ տարածքներով զբոսաշրջությամբ, հանգստի, առողջարանային հիանալի բնակավայր է: Այն առանձնանում է ջրային ռեսուրսներով, բնապահպանական և մշակութային հուշարձաններով:

2. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ներկայումս սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթություններից է փոքր և միջին բիզնեսի, զբոսաշրջության գործի զարգացումը, որոնց ուղղությամբ իրականացվում են ծրագրեր:

Անցյալ դարի 90-ական թթ-ին փակվեցին և սեփականաշնորհվեցին քաղաքի խոշոր ձեռնարկություններն ու գործարանները, որոնք այսօր չեն գործում:

Համայնքի բնակարանային տնտեսության պահպանումն իրականացվում է գործող 4 համատիրությունների միջոցով, որոնք ընդգրկում են 213 բազմաբնակարան շենք:

Համայնքային ոչ առևտրային 11 կազմակերպությունների՝ 5 նախակրթարանների, Հովի. Այվազովսկու անվան արվեստի, երաժշտական դպրոցների, Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի, Վ. Ստեփանյանի անվան Գրադարանների կենտրոնացված համակարգի /7 գրադարան/, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի, համայնքային մշակութային կենտրոնի գործունեության շնորհիվ նախադպրոցական կրթության իրականացումը, մարզամշակութային առօրյան, երեխաների արտադպրոցական աշխատանքների կազմակերպումը իրականացվում է համակարգված ու նպատակային:

Համայնքային մշակութային կյանքի ռիթմն ապահովում են «Սևան» ժողովրդական և «Սուինա-Սևան» ժամանակակից պարերի և էստրադային համույթները:

Համայնքում գործում են 4 հիմնական, 3 միջնակարգ և 1 ավագ դպրոց, արհեստագործական ուսումնարան, քոլեջ:

Սևանում է գտնվում «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ը, որի բնագիտական թանգարանն էլ Սևանա լճի, տարածաշրջանի կենդանական և բուսական աշխարհի, ժողովրդագրության, ավանդույթների ամբողջական ցուցանմուշների և ցուցադրությունների եզակի վայր է:

2.1 Ժողովրդագրություն (2013թ. դրությամբ)

Բնակչության թիվը 2010թ-ի դրությամբ կազմում է մոտավորապես 24.450 մարդ: 2012թվականի դրությամբ համայնքը ունի 7869տնային տնտեսություն, որից բազմաբնակարան շենքեր 209, սեփական տներ՝ 1868, բազմաբնակարան շենքերի բնակարաններ՝ 5792, 24.360 բնակիչ: Ըստ սեռահասակային դասակարգման՝ բնակչության 43%-ը կազմում են տղամարդիկ, 57%-ը՝ կանայք ու աղջիկներ: Բնակչության կառուցվածքը, ըստ տարիքի.

Համայնքի վերջին 3 տարվա ժողովրդագրական տվյալները

Բնակչության կառուցվածքը, ըստ տարիքի	0-5	6-15	16-18	19-62	63 և ավելի
Բնակիչների թիվը	979	2032	760	17419	3170

Գործազրկության մակարդակը համայնքում կազմում է 12.8 %

Տարի	Ծնունդներ տարվա ընթացքում	Մահացություններ	Ամուսնություններ	Ամուսնալուծություններ
2008	140	207	138	6
2009	139	160	140	8
2010	155	180	117	11
2011	253	170	131	7
01.06.2012	61	65	82	8

2.2 Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն

ՀՀ Օրենքը Տեղական ինքնակառավարման մասին, հոդված 33

Համայնքի ղեկավարը քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

1) իր իրավասության շրջանակում միջոցներ է ձեռնարկում պաշտպանելու համայնքի բնակիչների ու տնտեսավարող սուբյեկտների իրավունքները և օրինական շահերը.

2) կազմակերպում է համայնքի բնակիչների հաշվառումը.

3) ներկայացնում է համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դատարանում.

4) կատարում է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առնում քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկում է միջոցներ.

5) իր լիազորությունների շրջանակում կայացրած որոշումներով խթանում է տնտեսական գործունեություն նախաձեռնողների ծրագրերի իրականացմանը և նպաստում ու օժանդակում է համայնքում նրանց գործունեության առավել արդյունավետ իրականացմանը.

6) կանոնակարգում է հավաքների անցկացումը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով.

7) կազմակերպում է փաստաթղթերի պատճենների և կրկնօրինակների տրամադրումը համայնքի արխիվից.

8) Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով որոշում է ընդունում համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար տեղեր առանձնացնելու մասին:

Համայնքի ղեկավարը սույն բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները.

1) միջոցներ է ձեռնարկում տեխնոլոգիական աղետները կանխելու, տարերային և տեխնոլոգիական աղետների հետևանքները վերացնելու ուղղությամբ.

2) ապահովում է տեղամասային կենտրոնում բնականոն քվեարկության համար անհրաժեշտ կահավորումը.

2[1]) սահմանում է խնամակալություն, հոգաբարձություն, իրականացնում է խնամակալության և հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված այլ լիազորություններ.

2.2) վերացնում է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի դրույթների խախտմամբ փակցված քարոզչական պաստառները.

3) կազմակերպում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեությունն այն համայնքներում, որտեղ գտնվում են համապատասխան կառույցները.

3.1) միջոցներ է ձեռնարկում իր համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու և այդ ծնունդների պետական գրանցումներն ապահովելու ուղղությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով տալիս է երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարություն.

4) վավերացնում է համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը, եթե այդ համայնքում չկա մշտապես գործող նոտար.

5) հաստատում է համայնքի բնակիչ համարվող անձանց՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու, աշխատավարձ և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու, նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների՝ բանկային

ավանդներ ու փոստային առաքումներ (այդ թվում՝ դրամական և ծանրոցային) ստանալու լիազորագիրը, եթե այդ համայնքում չկա մշտապես գործող նոտար:

Համայնքում իրականացվում է Նոտարի գործունեությունը, գործում է ՔԿԱԳ Սևանի տարածքային բաժինը, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը, իրականացվում է արխիվային գործունեություն / տարածքային և քաղաքապետարանի/:

2.3 Ֆինանսական ոլորտ

ՀՀ Օրենքը Տեղական ինքնակառավարման մասին, հոդված 34

Համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

1) կազմում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի բյուջեի նախագիծը, դրանում առաջարկվող փոփոխություններն ու ապահովում է բյուջեի կատարումը, որի վերաբերյալ եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվություն է ներկայացնում համայնքի ավագանուն.

2) տեղական հարկերի, տուրքերի և վճարների՝ օրենքով սահմանված տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացնում է ավագանու հաստատմանը.

2.1) օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը.

2.2) տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ.

3) համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դիմաց կատարվող վճարների դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագիծը ներկայացնում է ավագանու հաստատմանը.

4) համաձայնեցնելով պետական լիազորված մարմնի հետ՝ համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում վարկային և փոխատվությունների ձևով միջոցների ներգրավման, այդ թվում՝ համայնքային պարտատոմսերի թողարկման փաստաթղթերը.

5) տնօրինում է համայնքի բյուջեի միջոցները, ապահովում է դրանց նպատակային օգտագործումը.

6) ստորագրում է ֆինանսական փաստաթղթերը:

Հիշյալ պարտադիր լիոազորություններն ամբողջությամբ իրականացվում են:

2.4 Հասարակական կարգի պահպանություն

ՀՀ Օրենքը Տեղական ինքնակառավարման մասին, հոդված 35

Համայնքի ղեկավարը հասարակական կարգի պահպանության բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները.

1) սույն օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար համայնքի տարածքում գործող ոստիկանությունից կարող է պահանջել համապատասխան աջակցություն, որը ենթակա է պարտադիր կատարման: Ոստիկանությունը համայնքում կատարված իրավախախտումների մասին շաբաթը մեկ անգամ տեղեկատվություն է տրամադրում համայնքի ղեկավարին.

2) անձանց, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, ենթարկում է վարչական պատասխանատվության:

Վարչական իրավախախտում կատարված անձինք ենթարկվում են պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով: Առկա է ոստիկանություն-համայնք համագործակցությունը:

2.5 Հանրային միջոցառումների կանոնակարգում

ՀՀ Օրենքը Տեղական ինքնակառավարման մասին, հոդված 35.1

1. Հանրային է հավաք չհանդիսացող այն միջոցառումը (տոնակատարություններ, մշակութային ու մարզական միջոցառումներ և այլն), որը տեղի է ունենում բացօթյա վայրում (փողոց, մայթ, հրապարակ, այգի, պուրակ և այլն), կամ որին կարող են մասնակցել անձինք, որոնց շրջանակը անհատապես որոշված չէ հանրային միջոցառման կազմակերպչի կողմից:

2. Ծիսակատարությունների կազմակերպման և անցկացման կարգը սահմանվում է «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով սահմանված կարգով:

3. Եթե ակնկալվում է, որ հանրային միջոցառման մասնակիցների թիվը գերազանցելու է երեք հարյուրը, ապա այդ հանրային միջոցառումն անցկացվում է համայնքի ղեկավարի տեղեկացմամբ: Տեղեկացումն իրականացնում է հանրային միջոցառման կազմակերպիչը հանրային միջոցառման անցկացման օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ, կազմակերպչի նախընտրած հետևյալ եղանակներից որևէ մեկով՝ անձամբ, հեռախոսով կամ փոստի միջոցով:

4. Եթե ակնկալվում է, որ հանրային միջոցառման մասնակիցների թիվը չի գերազանցելու երեք հարյուրը, ապա տեղեկացում չի պահանջվում, սակայն հանրային միջոցառման կազմակերպիչը հանրային միջոցառման անվտանգությունն ու բնականոն ընթացքն ապահովելու նպատակով կարող է հանրային միջոցառման անցկացմանմասին տեղեկացնել համայնքի ղեկավարին:

5. Տեղեկացումը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները.

1) հանրային միջոցառման վայրը,

2) հանրային միջոցառման սկզբի և ավարտի մոտավոր ժամանակը,

3) մասնակիցների սպասվող թիվը,

4) հանրային միջոցառման անցկացման համար օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցները,

5) հանրային միջոցառման կազմակերպչի անունը, ազգանունը և առկայության դեպքում՝ հեռախոսահամարները:

6. Համայնքի ղեկավարը հանրային միջոցառումն անցկացնելու մասին տեղեկացումը քննարկում է հանրային միջոցառման մասին տեղեկացումը ստանալու պահից 24 ժամվա ընթացքում: Եթե պատասխանի ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ապա պատասխանը ներկայացվում է դրան հաջորդող աշխատանքային օրը:

7. Եթե համայնքի ղեկավարին ներկայացված տեղեկացումից կամ նրա տրամադրության տակ գտնվող այլ տեղեկություններից պարզ է դառնում, որ նախատեսված հանրային միջոցառման ժամանակը, վայրը կամ եղանակը անմիջականորեն կարող են հանգեցնել սույն հոդվածի 12-րդ մասում նշված վտանգների առաջացմանը, ապա լիազոր մարմինը հանրային միջոցառման անցկացման համար կարող է առաջադրել պայմաններ: Դրանք կարող են վերաբերել բացառապես հանրային միջոցառման անցկացման ժամանակին, վայրին կամ եղանակին:

8. Պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերվելու դեպքում դրանք արձանագրվում են և կցվում գործին: Պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք

չբերվելու դեպքում լիազոր մարմինը որոշում է կայացնում հանրային միջոցառման ժամանակի, վայրի կամ եղանակի նկատմամբ սահմանափակումներ սահմանելու մասին:

9. Հանրային միջոցառման անցկացման համար սահմանվող սահմանափակումները չեն կարող աղավաղել հանրային միջոցառման նպատակը կամ հանրային միջոցառման մասնակիցների տարածքային մեկուսացման, ինչպես նաև հանրային միջոցառման անցկացման ժամանակի փոփոխության միջոցով էականորեն նվազեցնել դրա պոտենցիալ ներգործությունը կազմակերպիչների նախընտրած հանրային լսարանի վրա կամ որևէ այլ ձևով հանգեցնել հանրային միջոցառման փաստացի արգելմանը:

10. Այլ վայր առաջարկվելու դեպքում մասնավորապես պետք է ապահովվի տեղեկացման մեջ նշված՝ մասնակիցների սպասվող թվով մասնակցության հնարավորությունը, չպետք է առաջարկվեն կազմակերպիչների ընտրած համայնքի տարածքից դուրս վայրեր, իսկ առաջարկվող վայրը հնարավորինս պետք է մոտ լինի տեղեկացման մեջ նշված վայրին:

11. Հանրային միջոցառման մասին տեղեկացման մեջ հիշատակված ժամանակում և վայրում այլ հանրային միջոցառման անցկացումն ինքնին հիմք չէ հանրային միջոցառման նկատմամբ սահմանափակումներ սահմանելու համար, եթե չկա դրանց մասնակիցների բախման անմիջական վտանգ: Հակառակ դեպքում տեղեկացումն ավելի ուշ ներկայացրած հանրային միջոցառման հանդեպ կիրառվում են սույն հոդվածով սահմանված սահմանափակումները:

12. Եթե ներկայացվել են միևնույն օրը միևնույն վայրում հանրային հավաք և հանրային միջոցառում անցկացնելու դիմումներ, ապա նախապատվությունը տրվում է հանրային հավաքին:

13. Եթե միևնույն օրը միևնույն վայրում հանրային հավաք անցկացնելու վերաբերյալ դիմումը ներկայացվել է ավելի ուշ, քան հանրային միջոցառում անցկացնելու վերաբերյալ դիմումը, ապա նախապատվությունը տրվում է հանրային հավաքին, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1) հանրային միջոցառումն ակնկալվող մասնակիցների թվով էականորեն գերազանցելու է հանրային հավաքի մասնակիցների թիվը, կամ

2) հանրային միջոցառումը նախօրոք պլանավորված է եղել, և դրա տեղափոխումն այլ վայր կառաջացնի անհամարժեք բարդություններ կամ ծախսեր, և հանրային հավաքի անցկացման համար հնարավոր է առաջարկվել այլընտրանքային վայր, որը չի հանգեցնի հավաքի նպատակի աղավաղման կամ հավաքի մասնակիցների տարածքային մեկուսացման, ինչպես նաև հավաքի անցկացման ժամանակի կամ վայրի փոփոխության միջոցով էականորեն չի նվազեցնի դրա պոտենցիալ ներգործությունը կազմակերպիչների նախընտրած հանրային լսարանի վրա կամ որևէ այլ ձևով չի հանգեցնի հավաքի փաստացի արգելմանը:

14. Համայնքի ղեկավարը կարող է արգելել հանրային միջոցառման անցկացումը, եթե դա անհրաժեշտ է՝

1) անձանց կյանքի, առողջության կամ սեփականության պաշտպանության համար.

2) հանրության համար առաջացող էական անհարմարությունները կանխելու համար.

3) շրջակա միջավայրին անմիջականորեն սպառնացող էական վտանգը կանխելու համար:

15. Համայնքի ղեկավարը չի կարող արգելել հանրային միջոցառման անցկացումը, եթե միջոցառման անցկացման սահմանափակումների միջոցով հնարավոր է կանխել սույն հոդվածի 14-րդ մասում նշված վտանգները:

16. Եթե չեն առաջանում սույն հոդվածով սահմանված հանրային միջոցառումն արգելելու հիմքերը, ապա տեղեկացումը համարվում է ի գիտություն ընդունված: Տեղեկացումն ի գիտություն ընդունելու մասին համայնքի ղեկավարն անհապաղ տեղեկացնում է կազմակերպիչներին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը, ինչպես նաև դրա մասին գրություն է

փակցնում տեղականինքնակառավարման մարմնի վարչական շենքում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում:

17. Հանրային միջոցառման կազմակերպիչը՝

1) որոշում է հանրային միջոցառման ընթացքը,

2) պարտավոր է ներկա լինել հանրային միջոցառմանը և հասանելի լինել ոստիկանության ներկայացուցչի համար,

3) հանրային միջոցառման ընթացքում պարտավոր է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հանրային միջոցառման բնականոն ընթացքն ապահովելու համար, մասնավորապես հանրային միջոցառման մասնակիցների կողմից բռնի գործողությունները կանխելու, բռնությունից զերծ մնալու և ուժի կիրառմանը պատրաստ մասնակիցներից սահմանազատվելու կոչերի միջոցով,

4) իրավունք ունի դիմելու ոստիկանության ծառայողներին՝ հանրային միջոցառման անցկացման վայրից հարկադիր դուրս բերելու այն անձանց, ովքեր կոպտորեն խախտում են հանրային միջոցառման բնականոն ընթացքը,

5) պարտավոր է հավաքի մասնակիցներին անմիջապես տեղեկացնել հանրային միջոցառման բնականոն ընթացքն ապահովելու վերաբերյալ ոստիկանության ծառայողների պահանջների մասին:

Համաձայն գործող օրենքի՝ իրականացվում են բոլոր գործառույթները:

2.6 Պաշտպանության կազմակերպում

ՀՀ Օրենքը Տեղական ինքնակառավարման մասին, հոդված 36

1. Համայնքի ղեկավարը պաշտպանության կազմակերպման բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

1) օրենքով սահմանված կարգով վարում է համայնքի զինապարտների գրանցամատյան, նրանց վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները ներկայացնում է տարածքային զինվորական կոմիսարիատ.

2) օրենքով սահմանված դեպքերում և կարգով մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպմանը.

3) իրենց պարտականությունները խախտած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում այդ մասին անհապաղ գրավոր տեղեկատվություն է տրամադրում տարածքային զինվորական կոմիսարիատին:

2. Համայնքի ղեկավարը սույն բնագավառում իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները.

1) աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը.

2) աջակցում է զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, ինչպես նաև զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը.

3) աջակցում է բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

Քաղաքապետարանում վարվում է զինապարտների գրանցամատյանը, համայնքը մասնակցում է զորակոչի, զորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպմանը, սոցիալական ամենամյա օգնություն է տրամադրում պատերազմի վետերաններին, զինհաշմանդամներին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին: Պարբերաբար անցկացվում են ռազմահայրենասիրական միջոցառումներ՝ մասնակցությամբ պատանի

երկրապահների, մանկապարտեզների սաների, դպրոցահասակ երեխաների և երիտասարդների:

2.7 Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն

ՀՀ Օրենքը Տեղական ինքնակառավարման մասին, հոդված 37

Համայնքի ղեկավարը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմում է համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը՝ համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը և քաղաքաշինական գոտիավորման նախագիծը և (կամ) դրանց փոփոխություններն ու նախագծման առաջադրանքները:

Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի և (կամ) դրանց փոփոխությունների, ինչպես նաև նախագծման առաջադրանքների նախագծերը, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան, կառավարության սահմանած կարգով ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը:

1.1) սույն օրենքի 46-րդ հոդվածի չորրորդ մասին համապատասխան կազմում և վարում է համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզը (այսուհետ՝ ընթացիկ քարտեզ).

2) սահմանված կարգով վարում է համայնքի քաղաքաշինական կադաստրը, կազմում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը և ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը.

3) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատողներին տալիս է ճարտարապետահատակագծային առաջադրանք (կամ նախագծման թույլտվություն), որում ներառվում են իր կողմից ինժեներական սպասարկում իրականացնող ծառայություններին ներկայացված հարցման հիման վրա ստացված՝ օբյեկտի նախագծման տեխնիկական պայմանները:

Մեկից ավելի համայնքների տարածքներ ընդգրկող՝ հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների կառուցման նպատակով և հատուկ նշանակության հողերում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը (կառուցապատման ընթացակարգերը) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

4) սահմանված դեպքերում և կարգով համայնքի բնակչությանն իրազեկում է միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին.

4.1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցնում է ճարտարապետաշինարարական նախագծերը, տալիս է շինարարության (քանդման) թույլտվություն, միջոցառումներ է ձեռնարկում շինարարության թույլտվությամբ նախատեսված ժամկետներում կառուցապատումն ավարտելու համար.

5) սահմանված կարգով ձևակերպում է շինարարության ավարտական ակտ, ինչպես նաև տրամադրում է ավարտված շինարարական օբյեկտի շահագործման թույլտվություն.

5[1]) Կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը.

6) սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքով, համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ.

7) իրականացնում է համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների հաշվառումը և բաշխումը, կազմում է սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը, դրանք ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը.

7.1) մշակում և կազմում է համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների օտարման ամենամյա և քառամյա ծրագրերը, որոնք կազմում են համայնքի քառամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը, և դրանք ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը.

8) համայնքի քաղաքաշինական կանոնադրությանը համապատասխան տալիս է արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն.

9) կազմակերպում է համայնքի կոմունալ տնտեսության աշխատանքը, ապահովում է համայնքի սեփականություն համարվող բնակելի տների և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը, կազմակերպում է դրանց նորոգումը.

10) կազմակերպում և կառավարում է համայնքի սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, ոռոգման ու ջեռուցման ցանցերի և այլ կառուցվածքների շահագործումը.

11) կազմակերպում է համայնքի բնակավայրերի բարեկարգումը և կանաչապատումը.

12) կազմակերպում է աղբահանությունը և սանիտարական մաքրումը, ինչպես նաև իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ.

13) կազմակերպում է համայնքային գերեզմանատների գործունեությունը և դրանց պահպանման աշխատանքները, իրականացնում է «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործմանմասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ.

14) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով նախապատրաստում է համատիրությունների հիմնադիր ժողովները և աջակցում է դրանց անցկացմանը, ինչպես նաև օրենքով սահմանված՝ բազմաբնակարան շենքերի կառավարման այլ մարմինների ձևավորմանը: Ապահովում է համայնքի մասնակցությունն այդ շենքերի սպասարկմանը՝ իր սեփականությունը համարվող բնակարանների քանակին համապատասխան.

14.1) կառուցման ավարտի գրանցում չունեցող այն բազմաբնակարան շենքերի, որոնց ստորաբաժանված միավորները առանձին վկայականներով գրանցված են որպես 100 տոկոսից ցածր ավարտվածություն ունեցող անավարտ շինություններ, կառուցման ավարտի գրանցման նպատակներով աջակցում է կառուցապատողի գործառույթների իրականացման համար սեփականատերերի կողմից համապատասխան կազմակերպության ընտրության գործընթացին կամ կառուցապատողի գործառույթների իրականացումը վերապահում է համայնքում գործող՝ բազմաբնակարան շենքի կառավարմանը որևէ մարմնի, որն իրականացնում է կառուցապատողի գործառույթներ առանձնացված միավորների սեփականատերերի միջոցներով.

15) կազմակերպում է այն բազմաբնակարան շենքերի պահպանումը, որոնք չեն կառավարվում համատիրությունների կամ օրենքով սահմանված՝ բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի կողմից.

16) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի պահպանումն իրականացնելու նպատակով, օրենքով սահմանված կարգով, համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում պարտադիր նորմերի շրջանակներում իրականացվող աշխատանքների համար անհրաժեշտ վճարների չափերը:

Համայնքի ղեկավարը սույն բնագավառում իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները.

1) իրականացնում է բնակարանային և սոցիալական նշանակության այլ օբյեկտների շինարարությունը և կապիտալ վերանորոգումը.

2) իրականացնում է կառուցապատման աշխատանքները.

3) կազմում է «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված, ըստ անհրաժեշտության մշակվող, քաղաքաշինական փաստաթղթերի նախագծերը.

4) կազմակերպում է հանգստի վայրերի խնամքը և պահպանությունը.

5) կազմակերպում է սանիտարական մաքրման կայանքների շինարարությունը և շահագործումը:

Համաձայն գործող օրենքի՝ իրականացվում են բոլոր գործառույթները:

Բնակարանային ֆոնդ

		քանակը, հատ	ընդհանուր բնակելի մակերեսը, մ²
1	Ընդամենը բնակարաններ	5884	272562.92
1.1	1 սենյականոց բնակարաններ	1623	53451.76
1.2	2 սենյականոց բնակարաններ	1839	74710.33
1.3	3 սենյականոց բնակարաններ	1841	93239.06
1.4	4 և ավելի սենյականոց բնակարաններ	574	50516.97

Համայնքի բազմաբնակարան շենքերի բաշխվածությունն ըստ կառուցման ժամանակահատվածի.

		շենքերի քանակը, հատ	դրանցում բնակարանների քանակը, հատ	ընդհանուր բնակելի մակերեսը, մ²
1	մինչև 10 տարի առաջ կառուցված	0		
2	11-20 տարի առաջ կառուցված	0		
3	21-50 տարի առաջ կառուցված	213	5884	272562.92
4	50 և ավելի տարի առաջ կառուցված	0		

Համայնքի բազմաբնակարան շենքերի բաշխումն ըստ ունեցած խնդիրների

		Շենքերի քանակը	Բնակչության թվաքանակը
1	Վթարային շենքեր	5	760
2	Տանիքի խնդիր ունեցող	199	13860
3	Չգործող վերելակի խնդիր ունեցող	3	157
4	Ջրահեռացման խնդիր ունեցող	0	
5	Ջրամատակարարման խնդիր ունեցող	31	1316

2.8 Հողօգտագործում

ՀՀ Օրենքը Տեղական ինքնակառավարման մասին, հոդված 38

Համայնքի ղեկավարը հողօգտագործման բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով կազմում է համայնքների հողերի օգտագործման սխեմաներն ու ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը.

1.1) մշակում և կազմում է համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման ամենամյա և քառամյա ծրագրերը, որոնք կազմում են համայնքի քառամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը, և դրանք ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը.

2) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ և սահմանած պայմաններով, սահմանված կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն համարվող հողամասերը.

3) օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ.

4) օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները:

Համայնքի ղեկավարը սույն բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները.

1) սահմանված կարգով իրականացնում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը և կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը.

2) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան՝ օրենքով սահմանված դեպքերում ու կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն համարվող հողամասերը.

3) սահմանված կարգով ապահովում է համայնքի տարածքում գտնվող գեոդեզիական կետերի և համայնքի սահմանանիշերի պահպանությունը:

Համայնքի ղեկավարը սույն բնագավառում իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները.

1) իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողամասերի բարելավման աշխատանքներ.

2) իրականացնում է ներտնտեսային հողաշինարարական աշխատանքներ:

1. Համայնքի վարչական տարածք-1775.69 հա
2. Անօգտագործելի հողեր-35.24հա
3. Գերեզմանոցներ-16հա
4. Տնամերձ հողեր-223հա
5. Դպրոցներ-19հա
6. Հուշարձաններ-2հա
7. Մանկապարտեզներ-12հա
8. Քաղաքային զբոսայգի և պանթեոն-6հա
9. Երաժշտական դպրոց-1.5հա
10. Սպորտդպրոց, մշակույթի պալատ, տուն-9հա

Համայնքի հողերն ըստ նշանակության	ՀԱ
Գյուղատնտեսական	107.54
Բնակավայրերի	809.99
Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	174.67
Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր	97.37
Հատուկ պահպանվող տարածքների հողեր	524.23
Հատուկ նշանակության	0.15
Ճանապարհների տակ հողեր	74.66
Անտառային հողեր	-
Ջրային հողեր	63.13
Պահուստային	-
Ընդամենը	1777.08

2.9 Հաղորդակցություն, տրանսպորտ և Կապ

ՀՀ Օրենքը Տեղական ինքնակառավարման մասին, հոդված 39

Համայնքի ղեկավարը տրանսպորտի բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

1) կազմակերպում է համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանումը և շահագործումը.

1[1]) իր իրավասության սահմաններում կազմակերպում է ճանապարհային անվտանգ երթևեկությունը համայնքային ենթակայության ճանապարհների վրա.

2) կազմակերպում և կառավարում է համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքն ու համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների և կազմակերպությունների գործունեությունը.

3) տալիս է համայնքի տարածքում մարդատար և երթուղային տաքսիների ծառայություն իրականացնելու թույլտվություն:

Համայնքի ղեկավարը սույն բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունը.

- իրավասու մարմինների ներկայացմամբ հաստատում և թույլատրում է համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության նշանների տեղակայումն ու հանումը: Երթևեկության այն նշանները, որոնց տեղադրումը համաձայնեցված չէ համայնքի ղեկավարի հետ, իրավական ուժ չունեն:

Սույն բնագավառում համայնքի ղեկավարն իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունը.

- կազմակերպում է համայնքային ենթակայության ճանապարհների, կամուրջների և ինժեներական այլ կառույցների շինարարությունը:

……

Համայնքի ճանապարհային տնտեսության ընդհանուր մակերեսը կազմում է 707.5 հազ.քմ,որից 650.0 հազ.քմ ասֆալտապատ է, իսկ 57.5 հազ.քմ ‘Նոր Թաղ’ թաղամասը միացնող գրունտային ճանապարհն է, որը անհրաժեշտ է կառուցել: Համայնքի

ճանապարհները գտնվում են անմխիթար վիճակում և կարիք ունեն հիմնանորոգման: Համայնքը ապահովված է անհրաժեշտ տրանսպորտային միջոցներով:
Սևան համայնքի փողոցների երկարությունը

Ք. Սևան-43914մ, որից 28342մ՝ ասֆալտապատ, 15572մ գրունտային
Գոմաձոր թաղամաս-6252մ, որից 3575մ ասֆալտապատ, 2681 մ գրունտային
Ցամաքաբերդ թաղամաս-5756մ, որից 1358 մ ասֆալտապատ, 4398 մ գրունտային
Գագարին-5598 մ, որից 4283 մ ասֆալտապատ, 1315 գրունտային
Ընդհանուր -61524 մ, որից 37558 մ ասֆալտապատ, 23966 գրունտային

Սևան համայնքի փողոցների զբաղեցրած տարածքը
Ք. Սևան-422794քմ, որից288941քմ ՝ ասֆալտապատ,133853քմ գրունտային
Գոմաձոր թաղամաս-43917քմ, որից 26272քմ ասֆալտապատ, 17645 քմ գրունտային
Ցամաքաբերդ թաղամաս-46669քմ, որից 33784ք մ ասֆալտապատ, 12885ք մ գրունտային
Գագարին-47863 քմ, որից 38000քմ ասֆալտապատ, 9863քմ գրունտային
Ընդհանուր -561243քմ, որից 386997 ասֆալտապատ, 174246 գրունտային

1	Պետ. ենթակայության ճանապարհներ (երկարություն, կմ, որից՝ ասֆալտապատ)	
2	Համայնքային ենթակայությանճանապարհներ (երկարություն, կմ, որից՝ ասֆալտապատ)	43914կմ / 28894քմ
3	Փոստային բաժանմունքներ (քանակը)	5
4	Ներքաղաքային տրանսպորտ (երթուղիների թիվը, տրանսպորտային միջոցների տեսակը և քանակը)	14, միկրոավտոբուս - 4
5	Միջքաղաքային տրանսպորտ	ավտոբուս - 1, միկրոավտոբուս - 1
6	Մարզային (երթուղիների թիվը, տրանսպորտային միջոցների տեսակը և քանակը)	4, ավտոբուս - 2
7	Երևան (երթուղիների թիվը, տրանսպորտային միջոցների տեսակը և քանակը)	10, ավտոբուս - 2, միկրոավտոբուս - 4
8	Ֆիքսված հեռախոսակապ (առկայությունը՝ այո/ոչ, բաժանորդների թիվը)	այո
9	Շարժական ռադիո հեռախոսակապ-CDMA (առկայությունը՝ այո/ոչ, բաժանորդների թիվը)	ոչ
10	Բջջային հեռախոսակապ (առկայությունը՝ այո/ոչ, բաժանորդների թիվը)	այո
11	Ինտերնետ(առկայությունը՝ այո/ոչ)	այո
12	Այլ	

Համայնքի և/կամ նրա բնակիչների սեփականություն հանդիսացող.

1. մարդատար ավտոմեքենաների քանակը, հատ.....	2148
2. բեռնատար ավտոմեքենաների քանակը, հատ.....	342
3. ավտոբուսների քանակը, հատ.....	100
4. միկրոավտոբուսների /երթուղային տաքսիների քանակը, հատ.....	10
5. տրակտորների (թրթուրավոր և անիվավոր) քանակը, հատ.....	1
6. այլ գ/տ մեքենաների քանակը, հատ.....	0
7. աղբահանող մեքենաների քանակը, հատ.....	5
8. ձյուն մաքրող մեքենաների քանակը, հատ.....	1

2.10 Առևտուր և ծառայություններ

ՀՀ Օրենքը Տեղական ինքնակառավարման մասին, հոդված 40

Համայնքի ղեկավարն առևտրի և ծառայությունների բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

1) օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում հսկողություն է իրականացնում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում.

2) տալիս է ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվություն:

Թույլտվության տրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

3) տալիս է համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվություն.

3.1) տալիս է համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն.

4) համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին տալիս է ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն:

Թույլտվության տրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

6) առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման տարեկան ծրագրում համայնքի մասնակցության մասին:

7) համայնքի տարածքում տալիս է թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառքի թույլտվություն.

7) տալիս է համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն.

8) տալիս է համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն:

1	Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն	4180
2.	Ձկնորսություն, ձկնաբուծություն	96
3.	Հանքագործական արդյունաբերություն	0
4.	Մշակող արդյունաբերություն, այդ թվում գյուղատնտեսական հումք մշակող	318
5.	Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	736
6.	Շինարարություն	492
7.	Առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում	1214
8.	Գյուղատնտեսական ծառայություններ	38
9.	Հյուրանոցներ և ռեստորաններ	67
10.	Տրանսպորտ և կապ	492
11.	Տեղական ինքնակառավարում	54
12.	Կրթություն, այդ թվում նախադպրոցական	750
13.	Առողջապահություն	596
14.	Կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում	62
15.	ՀՈԱԿ	267
16,	Այլ	1748

2.11 Կրթություն

[ՀՀ Օրենքը Տեղական ինքնակառավարման մասին, հոդված 41]

Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում համայնքի ղեկավարն իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունը.

- կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, գրադարանների, կրթական և մշակութային այլ հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները:

Համայնքի ղեկավարը սույն բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունը.

- կազմակերպում է Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ:

Համայնքի ղեկավարը սույն բնագավառում իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները.

1) աջակցում է արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը.

2) աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը.

3) հաշվառում, դասակարգում և տարածում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային, բնական և տուրիստական-ռեկրեացիոն ռեսուրսների մասին տեղեկատվությունը.

4) աջակցում է երիտասարդության դերի բարձրացմանը.

5) աջակցում է հանրակրթական դպրոցների գործունեությանը:

Համայնքն ունի 4 հիմն. , 3 միջն. 1 ավագ դպրոց, 1 արհեստագործական դպրոց, 1 պետական քոլեջ:

		Հաստա-տությունների թիվը*	Դրանցից քանի՞սն են գործում	Դրանցում զբաղվածների թիվը, մարդ	Դրանցում ընդգրկվածների թիվը ըստ հետևյալ տարիքային խմբերի, մարդ								Եթե համայնքում առկա չէ կամ առկա է և չի գործում, նշեք մոտակա հաստա-տության հեռավորությունը, կմ
1	Նախադպրոցական ուսումնական հաստատություն	5	5	132	3-4 տ.		5-6 տ.		այդ թվում՝ հաշմանդամներ				
					արական	իգական	արական	իգական	3-4 տ.		5-6 տ.		
									արական	իգական	արական	իգական	
					97	81	130	141	-	-	1	2	
2	Դպրոցահեն նախակրթարան	2	2	2	3-4 տ.		5-6 տ.		այդ թվում՝ հաշմանդամներ				
					արական	իգական	արական	իգական	3-4 տ.		5-6 տ.		
									արական	իգական	արական	իգական	
							18	16					
3	Տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ)	7	7	122	2057 մինչև 7 տարեկան		1475 7 տարեկան և ավելի		4 այդ թվում՝ հաշմանդամներ				

		Հաստա-տությունների թիվը*	Դրանցից քանի՞սն են գործում	Դրանցում զբաղվածների թիվը, մարդ	Դրանցում ընդգրկվածների թիվը ըստ հետևյալ տարիքային խմբերի, մարդ								Եթե համայնքում առկա չէ կամ առկա է և չի գործում, նշեք մոտակա հաստա-տության հեռավորությունը, կմ
					արական	իգական	արական	իգական	մինչև 7 տարեկան		7 տարեկան և ավելի		
									արական	իգական	արական	իգական	
4	Միջնակարգ դպրոց (5-9-րդ դասարաններ)	3	3	112	արական		իգական		այդ թվում՝ հաշմանդամներ				
									արական		իգական		
					138		135		9		7		
5	Ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ)	1	1	74	արական		իգական		այդ թվում՝ հաշմանդամներ				
									արական		իգական		
					164		204		-		-		
6.	Հիմնական դպրոց	4	4	234	արական		իգական		այդ թվում՝ հաշմանդամներ				

		Հաստա-տությունների թիվը*	Դրանցից քանի՞սն են գործում	Դրանցում զբաղվածների թիվը, մարդ	Դրանցում ընդգրկվածների թիվը ըստ հետևյալ տարիքային խմբերի, մարդ				Եթե համայնքում առկա չէ կամ առկա է և չի գործում, նշեք մոտակա հաստա-տության հեռավորությունը, կմ
							արական	իգական	
					1021	1015	12	12	
7	Քոլեջ/ վարժարան	1	1	57	արական	իգական	այդ թվում՝ հաշմանդամներ		
							արական	իգական	
					140	69			
8	Ուսումնարան (տեխնիկում)	2	2	46	արական	իգական	այդ թվում՝ հաշմանդամներ		
							արական	իգական	
					128	69	2		
9	ԲՈՒՀ	-			արական	իգական	այդ թվում՝ հաշմանդամներ		X

Բ. Նախադպրոցական հաստատությունների կառուցվածքը

Նախադպրոցական հաստատություններ	Խմբերի քանակը		
	Կրտսեր խումբ	Միջին խումբ	Ավագ խումբ
Թիվ 1 “Բողբոջ” մ/մ ՀՈԱԿ	49	28	40
Թիվ 2 “Զարթոնք” մ/մ ՀՈԱԿ	36	29	34
Թիվ 3 “Հեքիաթ” մ ՀՈԱԿ	57	70	68
Թիվ 4 “Գալիք” մ/մ ՀՈԱԿ	67	44	49
Գագարինի մ/մ ՀՈԱԿ		25	35

Գ. ՀԻմնական և ավագ դպրոցների կառուցվածքը

Դպրոցներ	Դասարաններ											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
1-ին հիմն.	71	79	81	75	62	47	23	64	61			
2-րդ հիմն.	16	12	21	19	15	17	6	17	27			
3-րդ հիմն.	118	108	31	96	66	66	14	65	57			
4-րդ հիմն.	29	36	41	43	23	28	-	40	26			
5-րդ միջն	12	7	9	9	7	8	-	14	13	11	10	12
6-րդ միջն	11	13	8	8	17	5	-	17	10	18	31	15
Գագարինի միջն.	21	26	22	23	12	18	8	22	19	14	8	9
Ավագ										115	110	

Դ. Քոլեջում/վարժարանում/միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում ուսուցանվող մասնագիտությունների ցանկ

Սևանի պետական քոլեջ	
1	“Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ”
2	“Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում”
3	“Բանկային գործ”
4	Սպասարկման կազմակերպումը հյուրանոցներում և զբոսաշրջ. համալիրներում
5	Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրերի ապահովում
6	Փոխադրումների կազմակերպումը և երթևեկության կառավարումը ավտոտրանսպորտում
7	“Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ”
8	Նախադպրոցական կրթություն

2.12 Մշակույթ

[ՀՀ Օրենքը Տեղական ինքնակառավարման մասին, հոդված 41]

Համայնքում կա 1 մշակույթի պալատ:
Համայնքի տարածքում՝ Սևան քաղաքում, կառուցվում է եկեղեցի:

Համայնքում առկա մշակութային, արվեստի, սպորտի և այլ ուսումնական հաստատությունները.

		Հաստատությունների թիվը*	Դրանցից քանի՞սն են գործում	Դրանցում զբաղվածների թիվը, մարդ	Դրանցում ընդգրկ-վածների/այցելուների թիվը, մարդ/ամիս	Եթե համայնքում առկա չէ, նշեք մոտակա հաստա-տության հեռավորությունը, կմ
1	Մշակույթի տուն	1	1	15	1400	**X**
2	Կինոթատրոն	-				**X**
3	Թատրոն	-				**X**
4	Թանգարան	1	1	5	1100	**X**
5	Գրադարան	2	2	12	**2.12.1 1200**	**X**
6	Ինտերնետային կենտրոն/ակումբ	6	6	22	**2.12.2 3000**	**X**
7	Համակարգչային կաբինետ/կենտրոն	5	5	5	**2.12.3 1000**	**X**
8	Ազատ ժամանակի անցկացման վայրեր /սրճարան, բար, ռեստորան, այլ/	8	6	40	**2.12.4 X**	**X**
9	Մարզական դպրոց	1	1	29	**2.12.5 1500**	**X**
10	Գործող սպորտային հարմարություններ/հրապարակներ	2	2	-	**2.12.6 2000**	**X**
11	Երաժշտական/արվեստի դպրոց կամ խմբակ	2	2	53	1600	**X**
12	Եկեղեցի	0				**X**
13	Այլ /նշել/			**X**	**X**	

Հեռուստատեսային ալիք՝ 7 :

2.13 Երիտասարդություն

ՀՀ Օրենքը Տեղական ինքնակառավարման մասին, հոդված 41

Սևան քաղաքում գործում է “Սևան ԵԱ” ՀԿ

2.14 Առողջապահություն

ՀՀ Օրենքը Տեղական ինքնակառավարման մասին, հոդված 42

Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համայնքի ղեկավարն իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունը.

- կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության առողջապահական և մարզական հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը:

Համայնքի ղեկավարը սույն բնագավառում իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները.

1) աջակցում է սանիտարական վիճակի բարելավմանը.

2) աջակցում է առողջապահական մարմինների՝ սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը.

3) նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, իրականացնում է սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարություն, ստեղծում է հանգստի գոտիներ:

Համայնքում գործող բժշկական հաստատություններն են.

- *“Սևանի պոլիկլինիկա “ ՊՓԲԸ*
- *“Սևանի Հիվանդանոց” ՊՓԲԸ*
- *“Սևանի հոգեբուժական հիվանդանոց*
- *Մարզային առողջապահական գործակալություն*

Համայնքում առկա առողջապահական հիմնարկները.

	Հաստատությունների թիվը*	Դրանցից քանի՞սն են գործում	Դրանցում զբաղվածների թիվը, մարդ	Դրանցում բժիշկների թիվը, մարդ			Ըստ նախագծի մահճակալների թիվը	Դրանցում հաշվառվածների թիվը, մարդ	Եթե համայնքում առկա չէ կամ առկա է և չի գործում, նշեք մոտակա հաստատության հեռավորությունը, կմ
				մանկաբույժ	ընտանեական բժիշկ	նեոնատոլոգ			
1. Հիվանդանոցային բժշկական կազմակերպություն	1	1	123	0	1	1	137	-	-
2. Արտահիվանդանոցային բժշկական կազմակերպություն՝ (Պոլիկլինիկա և այլ հաստատություն) /մեծահասակների/	1	1	126	4	14	0	0	14500	
3. Արտահիվանդանոցային բժշկական կազմակերպություն՝ (Պոլիկլինիկա և այլ հաստատություն) /մանկական/	0								
4. Մասնագիտացված արտահիվանդանոցային բժշկական կենտրոն	1	1	15	0	-	-	14	-	

5. Ստոմատոլոգիական բժշկական օգնություն իրականացնող հաստատություն	10	8	12	2	-	-	X	X	
6. Դեղատուն	13	12	27	0	X	X	X	X	X
7. Այլ	2	2	2	0	0	0	X	X	X

2.15 Ֆիզիկական կուլտուրա և սպորտ

ՀՀ Օրենքը Տեղական ինքնակառավարման մասին, հոդված 42

Համայնքում գործում է “ Մանկապատանեկան մարզադպրոց” ՀՈԱԿ .

Գործում են ծանրամարտի, բռնցքամարտի, ըմբշամարտի, վոլեյբոլի, բասկետբոլի, ֆուտբոլի, թենիսի և մարտարվեստների խմբեր:

2.16 Աշխատանքի և սոցիալական ծառայություն

ՀՀ Օրենքը Տեղական ինքնակառավարման մասին, հոդված 43

1. Համայնքի ղեկավարն աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունը.

1) համայնքի տարածքում կազմակերպում է սոցիալական աջակցության (ծառայությունների) տրամադրումը ևտեղական ինքնակառավարման մարմինների՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների գործունեությունը:

2. Համայնքի ղեկավարը աշխատանքի և սոցիալական պաշտպանության բնագավառում իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները.

1) նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը, կազմակերպում է վճարովի հասարակական աշխատանքներ.

2) միջոցներ է ձեռնարկում հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:

Համայնքում բնակարանով անապահով և կարիքավոր ընտանիքների թիվը կազմում է 585 ընտանիք, որը տարեցտարի աճում է:

2.17 Գյուղատնտեսություն

ՀՀ Օրենքը Տեղական ինքնակառավարման մասին, հոդված 44

Համայնքի ղեկավարը գյուղատնտեսության բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

1) կատարում է համայնքային սեփականություն համարվող ոռոգման ցանցերի շահագործումը, դրանց շինարարությունը և վերանորոգումը.

2) համաքաղաքային կանոններին համապատասխան՝ տալիս է Երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվություն և կատարում է դրանց ամենամյա հաշվառում:

2. Համայնքի ղեկավարը սույն բնագավառում իրականացնում է հետևյալ կամավոր լիազորությունները՝

1) աջակցում է գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը.

2) աջակցում է տոհմային և սերմնաբուծական աշխատանքներին.

3) կազմակերպում է ագրարային կանոնների պահպանման աշխատանքները:

Ոռոգման ցանցի բացակայության պատճառով համայնքը դժվարանում է կազմակերպել և զարգացնել գյուղատնտեսական մթերքների արտադրությունը,թույլ զարգացած է անասնապահությունը՝արոտավայրերի և խոտհարքերի բացակայության պատճառով:

2.18 Բնության և շրջակա բնական միջավայրի պահպանություն

ՀՀ Օրենքը Տեղական ինքնակառավարման մասին, հոդված 45

Համայնքի ղեկավարը բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունը.

- կազմակերպում է համայնքի սեփականություն համարվող հողերի, անտառային և ջրային տարածքների, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանությունը:

Բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում համայնքի ղեկավարն իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները.

1) վերահսկողություն է իրականացնում բնության պահպանության բնագավառում, կազմակերպում է ընդերքի, անտառային, ջրային և օդային տարածքների, ինչպես նաև բուսական ու կենդանական աշխարհի օգտագործման և պահպանման միջոցառումները.

2) ապահովում է հողերի պահպանությունը հողատարումից, ողողումներից, ճահճացումից, քիմիական, ռադիոակտիվ նյութերով և արտադրական թափոններով աղտոտումից:

Համայնքում աղբահանությունը կատարվում է կենտրոնացված կարգով՝ կենցաղային աղբահանություն և սանիտարական մաքրում: Համայնքը ապահովված է անհրաժեշտ քանակությամբ կենցաղային աղբարկղերով:

Վատ վիճակում է գտնվում անձրևաջրահեռացման ցանցը՝հիմնականում վթարային են և խցանված:Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը աշխատում է կիսավթարային ռեժիմով: Հաճախակի են ջրամատակարարման ընդհատումները, որի հիմնական պատճառը ջրամատակարարման ցանցի բարձր մաշվածությունն է:

Սևանում գործում է նաև “ Սևան” Ազգային պարկ “ ՊՈԱԿ-ը:

- **Քույր քաղաք/ քաղաքներ /երկիր և յուրաքանչյուրի դեպքում՝ համագործակցության ժամկետը /օր.՝ սկսած 1994թ.-ից առ այսօր/,**

Ֆրանսիայի Իզեր վարչական շրջանի Գրենոբլ քաղաքի և ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի միջև համագործակցությունը սկսվել է 2004 թվականի հոկտեմբերից՝ համաձայնագրի կնքումով (déclaration d'intention) և շարունակվում է մինչ այսօր :

- **վերջին այցելության, նամակագրության ամսաթիվ,**

2012թ. հունիսի 12-23 այս համագործակցության շրջանակներում Սևան քաղաքից Գրենոբլ են մեկնելու 4 երաժիշտներ՝ մասնակցելու Երաժիշտների 4-րդ միջազգային փառատոնին :

Նամակագրությունը այս երկու քաղաքների ապակենտրոնացված համագործակցության ծրագրերի պատասխանատուների և այլ դերակատարների միջև շարունակվում է մինչ օրս :

Նախորդ այցելությունը եղել է 2011թ հոկտեմբերի 7-17, առողջապահական ոլորտի ծրագրերի քննարկում և Բժշկական օգնություն և զարգացում /AMD/ միջազգային հասարակական կազմակերպության 25 ամյակին նվիրված համաժողովի մասնակցություն՝ Սևանի հիվանդանոցի տնօրենի, Գավառի պոլիկլինիկայի տնօրենի և Սևանի քաղաքապետարանի ապակենտրոնացված համագործակցության ծրագրերի պատասխանատուի մասնակցությամբ :

- **համագործակցող կողմի ներկայացուցիչ/պատասխանատու կոնտակտային անձ և վերջինիս տվյալները,**

Eric RECOURA /Գրենոբլի քաղաքապետարանի միջազգային հարաբերություններ բաժնի ղեկավար/

eric.recoura@ville-grenoble.fr հեռ. +333476 00 76 72

Francoise NATUREL /Գրենոբլի քաղաքապետարանի միջազգային հարաբերություններ բաժնի Աֆրիկայի և Եվրոպական միությունից դուրս արևելյան երկրների հետ ապակենտրոնացված համագործակցության ծրագրերի ղեկավար/

francoise.naturel@ville-grenoble.fr հեռ. ++33476 00 76 82

- **համագործակցության համառոտ նկարագրություն՝ ուղղություններ/ոլորտներ, մասնավորապես պետական/ՏԻՄ մակարդակներում, Քաղ.հասարակություն և մասնավոր հատվածում համատեղ իրականացված/պլանավորված ծրագրեր և նախաձեռնությունները,**

Ֆրանսիայի Իզերի վարչական շրջանի Գրենոբլ քաղաքի և ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի միջև համագործակցությունը սկսվել է 2004 թվականի հոկտեմբերից՝ համաձայնագրի կնքումով (déclaration d'intention): Այս բարեկամության շնորհիվ Սևանի համար մի նոր էջ է բացվել հանրաճանաչ լինելու, առկա ներուժն ի ցույց դնելու և քաղաքն իր լճով առավելագույնս այցելելի դարձնելու:

Ապակենտրոնացված համագործակցությունն ընդգրկում է երեք ոլորտ՝ զբոսաշրջություն, առողջապահություն և ֆրանսերեն լեզվի տարածում: Համագործակցության երեք ոլորտներում էլ կան որոշակի իրականացված ծրագրեր, բազմաթիվ և նպատակային են փոխադարձ այցելությունները, փորձի փոխանակումներն ու վերապատրաստումները:

<u>Զբոսաշրջության ոլորտ</u>

Սևան-Գրենոբլ ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում 2005 թվականից Սևան քաղաքում և ափամերձ գոտում ֆրանսիացիների անմիջական մասնակցությամբ կատարվել են ուսումնասիրություններ՝ քաղաքի և ափամերձ հատվածի զբոսաշրջային ներուժը վերհանելու և Սևանը լավագույն հանգստավայր դարձնելու ուղղությամբ:

Զբոսաշրջության ոլորտում անցկացվող վերապատրաստումները, կլոր սեղաններն ու փորձի փոխանակումներն իրականացվում են Սևանի, Վարդենիսի, Գորիսի քաղաքապետարանների, Գորիսի զբոսաշրջության գրասենյակի, Վարդենիսի «Արեգունի» ՀԿ-ի, Գեղարքունիքի մարզպետարանի և ֆրանսիական գործընկերների՝ Գրենոբլի, Ռոմանի, Վիենի քաղաքապետարանների ու Իզերի Գլխավոր խորհրդի և ԱՖՐԱՏ ֆրանսիական կազմակերպության ներկայացուցիչների անմիջական մասնակցությամբ:

Այս ոլորտում մինչ օրս Սևան քաղաքի մասնակցությամբ իրականացված ծրագրերից են.

- «Սևանա լիճ. այցելուների ճանապարհային ուղեցույցի» լույսընծայում 2006 թ. և վերահրատարակում 2007 թ.:

- 2007 թ. ապրիլ – ֆրանսիական ԱՖՐԱՏ կազմակերպությունում զբոսաշրջության ոլորտի փորձի փոխանակում և մասնագիտական վերապատրաստում Սևան, Վարդենիս և Գորիս քաղաքների զբոսաշրջության մասնագետների մասնակցությամբ:
- «Սևանի զբոսաշրջության տեղեկատվական գրասենյակ» ուղեցույց-վահանակի տեղադրում Երևան-Սևան մայրուղում:
- 2007 թ. սեպտեմբերի 14 – «Համագործակցություն զբոսաշրջության ոլորտում» աշխատանքային հանդիպման կազմակերպում և անցկացում Սևանում: Հանդիպմանը մասնակցում էին Գեղարքունիքի մարզի և Սևանի, Վարդենիսի, Գորիսի, Դիլիջանի քաղաքապետարանների պատասխանատուներ, ավագանիներ, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության համագործակցության հարցերով ներկայացուցիչ, զբոսաշրջային գործունեությամբ զբաղվող գործարարներ, Գրենոբլի քաղաքապետարանի, Իզերի Գլխավոր խորհրդի պաշտոնատար անձինք և ԱՖՐԱՏ կազմակերպության աշխատակիցներ:
- 2008 թ. հունվարի 17-20 – մասնակցություն Մարսելում անցկացված «Համերաշխության զբոսաշրջություն և կայուն զարգացում» միջազգային համաժողովին:
- 2008 թ. մայիս-հունիս ամիսների ընթացքում ֆրանսիական գործընկերների՝ Իզերի Գլխավոր խորհրդի և Վիենի, Ռոմանի և Գրենոբլի քաղաքապետարանների ներկայացուցիչների նախաձեռնությամբ Գորիս (թեմա՝ «Զբոսաշրջիկների ընդունելություն և հաղորդակցություն»), Վարդենիս (թեմա՝ «Հյուրընկալություն ընտանիքներում և տեղական արտադրանքի արժևորում») և Սևան (թեմա՝ «Զբոսաշրջիկների խմբի աշխատանքների ուղղորդում, կազմակերպում և ղեկավարում») քաղաքներում զբոսաշրջության մասնագետների մասնակցությամբ վերապատրաստումներ, փորձի փոխանակումներ:
- 2009 թ. – Սևան-Գրենոբլ համագործակցության տան հիմնում Սևանի քաղաքապետարանում:
- 2009 թ. հունիսի 3-5 – մարզում կայուն զբոսաշրջությանը նվիրված ֆրանս-հայկական առաջին համաժողովի կազմակերպչական աշխատանքներ և մասնակցություն:
- 2009 թ. հոկտեմբեր – «Զբոսաշրջության զարգացումը որպես Հայաստանի կայուն զարգացում Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի համար» նախնական համաձայնագրի

կետերի քննարկում Սևանի, Վարդենիսի, Գորիսի զբոսաշրջության մասնագետների և Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակիցների մասնակցությամբ:

- 2010 թ. ապրիլ, հունիս, սեպտեմբեր – ԿԱՋԱ շվեյցարական մարդասիրական հիմնադրամում «Տեղական զբոսաշրջության ինտերնետային զարգացման ծրագիր» աշխատանքային հանդիպումներ, մասնակցություն:
- 2010 թ. հունիսի 30– «Գեղարքունիք-Գորիս» տեղեկատվական գրքույկի ստեղծման նպատակով Գեղարքունիքի մարզին և Գորիսին վերաբերող տեքստերի քննարկում:
- 2011 թ. ապրիլի 15-21 – Իզերի Գլխավոր խորհրդի և Գրենոբլի, Վիենի, Ռոմանի քաղաքապետարանների ներկայացուցիչների Հայաստան կատարած այցի շրջանակներում քննարկումներ, կլոր սեղաններ՝ «Գեղարքունիք-Գորիս» եռալեզու գրքույկի նախնական տարբերակի, Հայաստանի զարգացման ինտերնետային կայքի, զբոսավարների վերապատրաստման դասընթացների վերաբերյալ և այցելություններ Գեղարքունիքի մարզի և Գորիսի տեսարժան վայրեր:
- 2011 թ. սեպտեմբերի 16-19 – ԿԱՋԱ շվեյցարական մարդասիրական հիմնադրամի «Էսպաս» երիտասարդական կրթամշակութային կենտրոն, զբոսավարների վերապատրաստման դասընթացներ:
- 2011 թ. սեպտեմբերի 22-25 – ԿԱՋԱ շվեյցարական մարդասիրական հիմնադրամի Գյումրու սոցիալ-ուսուցողական զարգացման կենտրոն, «Համայնքային զարգացման ինտերնետային կայքի» հետ կապված աշխատանքների գծով վերապատրաստում Սևանի, Վարդենիսի, Գորիսի քաղաքապետարանների և Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակիցների մասնակցությամբ:
- 2011 - 2012թթ. զբոսավարների վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցում են Սևանի, Վարդենիսի, Գորիսի քաղաքապետարանների և Գեղարքունիքի մարզպետարանի կողմից առաջարկված համապատասխան անձինք:
- 2012թ. մայիսին <Գեղարքունիքի մարզի ուղեցույց. երթուղի դեպի Սյունիքի մարզի Գորիս քաղաք> եռալեզու ուղեցույցի հրատարակություն 1500 օրինակ

Առողջապահության ոլորտ

«Բժշկական օգնություն և զարգացում» ֆրանսիական միջազգային կազմակերպության և ՀՀ Գեղարքունիքի մարզի «Սևանի հիվանդանոց» ՊՓԲԸ-ի միջև կնքված համագործակցության հուշագրի շրջանակներում արդեն մի քանի տարի է՝ իրականացվում են բազմաթիվ ծրագրեր:

Սևանի հիվանդանոցին աջակցության ծրագիրը կյանքի է կոչվել Գրենոբլ և Սևան քաղաքների միջև ապակենտրոնացման համագործակցության շրջանակներում:

Նպատակը՝ համատեղ ուժերով Սևանի հիվանդանոցի պայմանների բարելավումը, անձնակազմի վերապատրաստումը, բուժսարքավորումներով վերազինումը:

Այս ոլորտում իրականացված ծրագրերն ու միջոցառումները.

- 2005 թ. ապրիլ – Գրենոբլի հիվանդանոցի գլխավոր բժշկի այցը Սևանի հիվանդանոց, ծանոթացում պայմաններին, կարիքների գնահատում:
- 2005 թ. հուլիս – Սևանի հիվանդանոցի տնօրենի փոխադարձ այցը Գրենոբլի հիվանդանոց, տեղում հիվանդանոցի պայմաններին ծանոթացում, փորձի փոխանակում:
- 2007 թ. – Սևանի հիվանդանոցին շտապօգնության մեքենայի և բուժսարքավորումների նվիրատվություն:
- 2009 թ. մայիս – «Բժշկական օգնություն և զարգացում» կազմակերպության նախագահի այցը Սևանի հիվանդանոց, բուժսարքավորումների նվիրատվություն:
- 2009 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր – հիվանդանոցի շտապօգնության բաժանմունքի վերանորոգում, շտապօգնության բուժանձնակազմի վերապատրաստում՝ «Բժշկական օգնություն և զարգացում» կազմակերպության համապատասխան բժիշկ մասնագետի կողմից:
- 2010-2011 թթ. – հիվանդանոցի վիրահատարանների հիմնանորոգում «Բժշկական օգնություն և զարգացում» կազմակերպության շինարարության գծով մասնագետի անմիջական ղեկավարությամբ և աշխատանքների կազմակերպմամբ:
- 2011 թ. հոկտեմբեր – բուժանձնակազմի վերապատրաստում՝ «Բժշկական օգնություն և զարգացում» կազմակերպության համապատասխան բժիշկ մասնագետի կողմից:
- 2011 թ. հոկտեմբերի 7-17 – «Բժշկական օգնություն և զարգացում» կազմակերպության հրավերով Սևանի հիվանդանոցի և Գավառի պոլիկլինիկայի տնօրենների գործնական այցը Գրենոբլ: Նպատակը՝ տեղում ծանոթանալ Գրենոբլի հիվանդանոցների գործունեությանը, քննարկել 2012 թ. նախատեսվող ծրագրերը:

Ֆրասերեն լեզվի տարածում (ֆրանկոֆոնիա)

Համայնքում ֆրանսերեն լեզվի տարածման աշխատանքները սկսվել են 2009 թվականից՝ «Ֆրանս-ֆորմասիոն ինտերնասիոնալ» կազմակերպության հետ համատեղ: Կազմակերպության գրասենյակը Երևանում է, իսկ Սևան-Գրենոբլ ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում ֆրանսերենի տարածման ուղղությամբ Սևանում անցկացվող միջոցառումներն իրականացվում են Գրենոբլի «Հայաստան. փոխանակում և զարգացում» ասոցիացիայի հետ համատեղ:

Համայնքում ֆրանսախոսության զարգացմանը նպաստող իրականացված ծրագրերից են.

- 2009-2011 թթ. հունիս-օգոստոսին ֆրանսերենի անվճար դասընթացներ դպրոցահասակների, ուսանողների և զբոսաշրջության ոլորտում ներգրավված անձանց համար:
- Զբոսաշրջության գրասենյակի աշխատակիցների վերապատրաստում համագործակցության բնագավառներին առնչվող թեմաներով:
- Ֆրանսերենով հանդիպումների կազմակերպում:
- 2011 թ. մարտի 15-ապրիլի 15 – միջոցառումներ ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակներում:
- Ֆրանսերեն լեզվով երկու ֆիլմերի ստեղծում («Երաժշտությունը համերաշխության լեզուն է», «Ինկոգնիտո»)՝ ֆրանսախոս ուսանողների կողմից:
- 2012թ. հունիս-օգոստոսին ֆրանսերենի անվճար դասընթացներ դպրոցահասակների և ուսանողների համար:

Այլ իրականացված ծրագրեր և այցելություններ

- 2007 թ. մարտի 19-26 – Սևանի դպրոցների 12-14 տարեկան 20 աշակերտների այցը Գրենոբլ՝ Ֆրանսիայում Հայաստանի տարվա կապակցությամբ անցկացվող «1000 դեսպաններ» ծրագրի շրջանակներում: Երեխաները հյուրընկալվեցին Գրենոբլի Վերքոր քոլեջում, մասնակցեցին տարբեր դասապրոցեսների, ճանաչողական այցեր կատարեցին Գրենոբլի տեսարժան վայրեր:

- 2009 թ. սեպտեմբերի 20-23 – Սևանի քաղաքապետի և ապակենտրոնացված համագործակցության ծրագրերի պատասխանատուի պաշտոնական այցը Գրենոբլ: Նպատակը՝ մասնակցությունը Գրենոբլի հայկական մշակույթի տան նախաձեռնությամբ կազմակերպված՝ ՀՀ անկախության տոնի միջոցառմանը և 2009 թ. համագործակցության ոլորտում իրականացված աշխատանքների հաշվետվության ներկայացնելը:

- 2010 թ. հոկտեմբերի 4-22 – Ռոն-Ալպեր-Հայաստան, Գրենոբլ-Սևան, Ռոման-Վարդենիս և Վիեն-Գորիս ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում Սևան, Վարդենիս և Գորիս քաղաքների զբոսաշրջության գծով պատասխանատուների վերապատրաստում «Ապակենտրոնացված համագործակցություն» թեմայով՝ Լիոնի կաթոլիկ համալսարանի տեղական զարգացման միջազգային ուսուցման կենտրոնում (Centre International d'Etudes pour le développement Local, Université Catholoque de Lyon):

- 2010 թ. հոկտեմբերի 23-30 – Սևան, Վարդենիս և Գորիս քաղաքների զբոսաշրջության գծով պատասխանատուների մասնակցությունը Գրենոբլի, Ռոմանի, Վիենի քաղաքապետարաններում և Իզերի Գլխավոր խորհրդում կազմակերպված աշխատանքային հանդիպումներին, 2011 թ. ֆրանսիական «քույր» քաղաքների կողմից առաջարկվող ծրագրերի քննարկում:

- 2010 թ. հոկտեմբերի 7-8 – հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության համաժողովի մասնակցություն:

- **համագործակցության կապերի ներկա վիճակը,**

  Դրական և շարունակական

2.19 Միջազգային և Հասարակական կազմակաերպությունները

- "Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն " ՀԿ
- "Սևան ԵԱ " ՀԿ
- "Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Սևանի մասնաճյուղ" ՀԿ
- "Տեխնոդրոմ" ՀԿ
- "Կապուտաչյա Սևան " ՀԿ

2.20 Համայնքի ձեռներեցության ոլորտները

1	Գյուղատնտեսական ծառայություններ	38
2	Հյուրանոցներ և ռեստորաններ	67
3	Տրանսպորտ և կապ	492
4	Տեղական ինքնակառավարում	54
5	Կրթություն, այդ թվում նախադպրոցական	750
6	Առողջապահություն	596
7	Կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունների մատուցում	62

2.21 Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի համառոտ նկարագրություն

Գույքի տեսակը	Անվանումը/ նպատակային օգտագործումը	Սեփ. Իրավունքի վկայականի առկայությունը (այո/ոչ)
Նորաստեղծ գույք		
Բարելավված գույք	Թիվ 1 “Բողբոջ” մ/մ	
	Թիվ 3 “Հեքիաթ” մ	
	Թիվ 4 “Գալիք” մ/մ	
	Գագարինի մ/մ	
	Մարզադպրոց	
	Համ. Մշ. Կենտրոն	
Վարձակալման հանձնված գույք	Վարչական շենք	այո
Վաճառքի ենթակա գույք		
Ոչ շահութաբեր գույք		
Ձեռքբերված գույք		
Այլ		

3. <u>Համայնքի բյուջեն</u>

4.1 Համայնքի 2009-2012 թթ. **<u>վարչական</u>** բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2013-2016թթ. մուտքերի կանխատեսումը (հազար դրամ)

		2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
1	Գույքահարկ շենք-շինությունների գծով	17618.0	18478.1	26663.4	24967.5	27000.0	28500.0	30500.0	35000.0
2	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	29760.8	32962.7	32805.5	30191.0	41000.0	41656.9	43000.0	46600.5
3	Հողի հարկ վարչական տարածք. Գտնվ. Հողի համար	5324.2	6642.8	11071.7	5840.4	9000.0	9200.4	10550.0	11340.4
4	Տեղական տուրք	5433.9	5070.7	5279.2	5798.6	9000.0	9500.0	9800.0	8800.4
5	Պետական տուրք	4230.9	4447.6	4966.6	3272.4	5000.0	5000.0	6000.0	6000.0
6	Ոչ հարկային եկամուտ	34871.7	25755.0	36340.7	25847.9	69187.3	72520.0	73650.0	76250.0
7	Սեփական եկամուտներ, ընդամենը	97239.5	93356.9	117127.1	95917.8	160187.3	166377.3	173500.0	183991.3
8	Դոտացիա	215990.5	266724.6	266130.0	261082.3	296730.0	300540.0	304967.3	308776.6
9	ՔԿԱԳ պահպանման ծախսեր	3968.6	3725.2	3125.2	2525.2	2525.2	2525.2	2525.2	2525.2
10									
11									
12									
	Ընդամենը եկամուտներ	317198.6	363806.7	386382.3	359525.3	959442.5	469442.5	480992.5	496493.1

4.2 Հա Համայնքի 2009-2012 թթ. **<u>վարչական</u>** բյուջեի ծախսերի ցուցանիշները և 2013-2016թթ. ծախսերի կանխատեսումը (հազար դրամ)

		2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
1	Ընդհ. Բն. Համ. Ծառ.	74454.7	77700.0	80455.5	80495.9	92825.2	95825.2	95825.2	95825.2
2	Տնտես. Հարաբ.	1459.2	1200.0	600.0					
3	Շրջ. Միջ. Պաշտպ.	50940.0	54445.0	51839.1	62345.2	92800.0	92800.0	92800.0	92800.0
4	Բնակ. Շին. և կոմ. Ծառ.	600.0	569.5	664.3	2831.5	3000.0	3000.0	3000.0	3000.0
5	Կապ. Դրամաշն. ՀՄՆ Սևանի պոլիկլինիկա ՊՓԲԸ	-	14827.4	-					
6	Հանգիստ և մշակույթ	24770.0	23467.0	26985.0	27827.3	40781.0	45781.0	45781.0	45781.0
7	Կրթություն	132119.0	130184.0	156933.0	124502.0	170191.0	172190.0	175190.0	178190.0
8	Սոցիալական պաշտպ	17466.58	12020.0	17735.0	13093.0	11000.0	11000.0	13000.0	14000.0
9	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ	10000.0	49347.7	49544.8	47872.9	49403.8	49403.8	49403.8	49403.8
10	ն/թ Վարչ. Բյ. Պահ. Ֆոնդից հատկ. Ֆոնդ. բյուջե	10000.0	48414.7	49544.8	47872.9	49403.8	49403.8	49403.8	49403.8
11									
12									
	Ընդամենը ծախսեր	311809.4	363757.6	384756.7	358967.8	460000.0	470000.0	475000.0	480000.0

4.3 Համայնքի 2009-2012 թթ. **ֆոնդային** բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2013-2016թթ. մուտքերի կանխատեսումը (հազար դրամ)

		2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
1	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ,	12343.3	17612.4	8796.0	15213.6	125346.2	78420.0	85300.4	91440.2
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									
11									
12									
	Ընդամենը եկամուտներ								

4.4 Հա Համայնքի 2009-2012 թթ. **ֆոնդային** բյուջեի ծախսերի ցուցանիշները և 2013-2016թթ. ծախսերի կանխատեսումը (հազար դրամ)

		2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
1	Ընդհ. Բն. Համ. Ծառ	8947.8	11805.0	3730.7	2957.2	9355.0	9455.0	9455.0	9555.0
2	Ճանապարհային տնտես.	21036.2	30645.4	27844.4	36320.0	109664.0	114664.0	114664.0	120664.0
3	Անձրևաջրատար ցանցի դիտահ. Հիմն. Աղբարկղ տեղ.	4000.0	21641.1	5603.6	2880.5	3487.0	3787.0	3787.0	3787.0
4	Բ/Բ շենքերի տանիքների հիմն. և նախագծ.	-	-	120.0	2000.0	-	-	10000.0	13000.0
5	Փողոց. Լուս. Ցանցի կառ.	980.0	6348.7	9165.0	17988.4	15340.0	15340.0	15340.0	15340.0
6	Մանկ. Խաղահր. Կառ	2500.0	1997.0		495.0				
7	Գոմաձոր թաղամասի մշակույթի տան հիմն.			12080.4	580.0				
8	Թիվ 1 “Բողբոջ” մ/մ տանիքի հիմն	2200.0						3600.0	3600.0
9	Շրջ. Միջ. Պաշտպ.	950.0				36904.0	37904.0	37904.0	37904.0
10	Բնակ. Շին. և կոմ. Ծառ				1491.0				
11	Թիվ 3 “Հեքիաթ” ման . ցանկապատի կառ.								
12									
	Ընդամենը ծախսեր	40614.0	72437.2	58544.1	64712.1	174750.0	184750.0	194750.0	20470.0

4. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

4.1 Քաղաքապետարան/գյուղապետարանի կառուցվածքը

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



5.1.1 Համայնքի ղեկավար և հայեցողական պաշտոններ

Պաշտոն
Համայնքի ղեկավար
Քաղաքապետի տեղակալ-1
Քաղաքապետի խորհրդական-1
Քաղաքապետի օգնականներ-3

5.1.2 Համայնքի ավագանի

Ավագանու սահմանված անդամների թիվը ____15_____

Ավագանու ընտրված անդամների թիվը ___15_____

Ավագանու անդամների կազմը

Անուն, Ազգանուն	Տարիքը	Սեռը	Քանի՞ անգամ է ընտրվել
1.Ավագյան Կամո			4
2. Բաղդասարյան Հունան			3
3. Անտոնյան Գուրգեն			3
4. Սարգսյան Արսեն			3
5. Սարգսյան Տիգրան			3
6. Սաղաթելյան Արմեն			1
7.Էլիզբարյան Արամ			2
8.Հայրապետյան Արման			1
9.Սաղաթելյան Վահե			1
10.Գևորգյան Արայիկ			2
11.Ավետիսյան Բագրատ			2
12.Սարգսյան Նելսոն			1
13.Ավետիսյան Արամ			1
14.Ներսիսյան Սերգեյ			1
15.Սահակյան Պարգև			1

5.1.3 Համայնքի ղեկավարի աշխատակազմը և համայնքային ծառայողների ցանկը

Պաշտոն	Հաստատությունը
Գլխավոր պաշտոն	1
Բաժնի պետ	7
Գլխավոր մասնագետ	11
Առաջատար մասնագետ	12
Առաջին կարգի մասնագետ	5

5.1.4 Համայնքի ենթակայության տակ գտնվող հաստատությունների ցանկը

1. Թիվ 1 “Բողբոջ” մ/մ ՀՈԱԿ
2. Թիվ 2 “Զարթոնք” մ/մ ՀՈԱԿ
3. Թիվ 3 “Հեքիաթ” մ ՀՈԱԿ
4. Թիվ 4 “Գալիք” մ/մ ՀՈԱԿ
5. Գագարինի մ/մ ՀՈԱԿ
6. Մանկապատնեկան մարզադպրոց ՀՈԱԿ
7. Երաժշտական դպրոց ՀՈԱԿ
8. ՄՊՍԿ ՀՈԱԿ
9. Արվեստի դպրոց ՀՈԱԿ
10. ԳԿՀ ՀՈԱԿ
11. Համայնքային մշակութային կենտրոն ՀՈԱԿ
12. " Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում" ՀՈԱԿ

5.1.5 Տեխնիկական հագեցվածությունը

	Քաղաքապետարան/ գյուղապետարան	**Համայնքային ենթակայության հիմնարկ**
Համակարգիչ, քանակ	20	
Պատճենահանող սարք, քանակ	4	
Տպիչ, քանակ	10	
Ներքին համակարգչային ցանց, այո/ոչ	այո	
Ներքին համակարգչային ցանց, այո/ոչ		
այլ		

5. <u>ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ</u>

5.1 Տեսլականը

Ունենալ զարգացած, ուժեղ, կազմակերպված համայնք

5.2 Նպատակը

- Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով, համագործակցության զարգացումով/ միջազգային և տեղական դոնոր կազմակերպություններ, քույր քաղաքների շրջանակներում համագործակցության զարգացում և այլն/ հետևողականորեն ապահովել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական,մշակութային և հանգստի պայմանները:

-Ինտեգրում Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրերին:

- Քաղաքը դարձնել գեղեցիկ և բարեկարգ:

-Զարգացնել հանգստի գոտին և զբոսաշրջիկությունը

- Համայնքը ապահովել նորմալ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգով

- Բարեկարգել և կառուցել հաղորդակցության ուղիները .

- Նոր աշխատատեղերի ստեղծում

5.3 ՈՒԹՀՍ (SWOT) ՎԵԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

1. Զբոսաշրջության համար նպաստավոր պայմաններ
2. Բարենպաստ կլիմայական պայմաններ, լավ կազմակերպված վարչակազմ՝ ներդրողներին օգնելու և ուղղորդելու համար
3. Մասնագետների կրթական բարձր մակարդակ, կադրերի ապահովվածություն
4. Պատմամշակութային արժեքների առկայություն
5. Գազաֆիկացված քաղաք
6. Համերաշխ և հյուրասեր բնակչություն
7. Բնակչության վստահությունը Տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ
8. Բարենպաստ կլիմայական պայմաններ
9. Կիսակառույց շենքերի առկայություն
10. Մատչելի աշխատուժի առկայություն
11. Միջպետական հանգույցում գտնվելը
12. Սևանա լիճ
13. Ապակենտրոնացված համագործակցություն
14. Մարզական գրանցված հաջողություններ
15. Կազմակերպված երիտասարդություն

1.15 ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

1. Հիմնական ենթակառուցվածքների, ժամանակակից պահանջներին համապատասխան հյուրանոցների և ռեստորանների բացակայություն
2. Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ
3. Վթարային և կիսակառույց բնակելի շենքերի առկայություն
4. Գործազրկության բարձր մակարդակ
5. Երիտասարդության աշխատանքային և ժամանցային վայրերի բացակայություն
6. Երիտասարդների և մտավորականության հոսք
7. Սեյսմիկ վտանգի
8. Բնակարանային շինարարության բացակայություն
9. Ենթակառուցվածքների անմխիթար վիճակ
10. Երկարատև ձմեռ
11. Միջհամայնքային տրանսպորտի բացակայություն
12. Արդյունաբերական ձեռնարկությունների բացակայություն
13. Ձմեռային զբոսաշրջության կազմակերպման ռեսուրների բացակայություն
14. Բնակչության անվճարունակություն

6. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

1. ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԲՆԱԿՖՈՆԴ

Սևան համայնքն ունի 213 բազմաբնակարան բնակելի շենքեր, որոնցից 9 հարկանի՝ 27 հատ, 6 հարկանի՝ 2 հատ, 5 հարկանի՝ 69 հատ, 4 հարկանի ՝ 33 հատ, 3 հարկանի 13 հատ և 2 հարկանի 45 հատ, ինչպես նաև Գագարին գյուղում՝ 1 հարկանի 24 հատ բնակելի քոթեջներ:

Բազմաբնակարան շենքերի բնակարանների ընդհանուր թիվը կազմում է 5751, մուտքերի թիվը՝ 457:

Շենքերի ընդհանուր մակերեսը կազմում է 366279 քմ:

Խաղաղության 16, Ս. Նովա 19, Նաիրյան 4, Գայի 1 բազմաբնակարան շենքերն ունեն 3-րդ աստիճանի վնասվածություն, իսկ Նալբանդյան 36 բազմաբնակարան բնակելի շենքը 4-րդ աստիճանի վթարային է:

Հիմք ընդունելով մասնագիտական հանձնախմբերի կողմից ներկայացված տեխնիկական ակտերը, փաստում ենք, որ Սևան համայնքում բազմաբնակարան բնակելի շենքերի հետագա պահպանման համար անհրաժեշտ է կատարել հետևյալ շինմոնտաժային անհետաձգելի աշխատանքները.

1. Հարթ տանիքների վերանորոգում - 2870 քմ
2. Ցինկապատ թիթեղով տանիքների վերանորոգում -18093 քմ
3. Ազբոշիֆերից տանիքների վերանորոգում -28220 քմ
4. Տանիքների փայտյա կոնստրուկցիաների վերանորոգում
   / ծպեղնաոտք, հենասյուներ, հեծաններ, կավարամած / - 312.5 խմ /
5. Ջրհորդանների վերանորոգում ցինկապատ թիթեղից - 14746 գ/մ
6. Ջրահեռացման խողովակների տեղադրում ցինկից - 834 կոմպլեկտ
7. Շենքերի մուտքերի վերանորոգում -466/2496 մուտք/հարկ
8. Ներքին ջրամատակարարման ցանցի վերանորոգում
   / դ - 20մմ -2828 գ / մ
   դ-25մմ - 260 գ / մ
   դ-37մմ - 1245 գ / մ
9. Ներքին կոյուղագծերի վերանորոգում
   դ-100մմ - 1798 գ / մ
   դ-50մմ - 519 գ / մ
10. Շենքերի մուտքերում նոր դռների տեղադրում - 738 քմ

11. Շենքերի մուտքերի դռների վերանորոգում և ներկապատում - 1201 քմ

12. Արտաքին լուսավորության ցանցի իրականացում - հենասյուն/լուսամփոփ -

- 107 / 217 հատ

13. Բակերի ասֆալտապատում - 12500 քմ

14.Բակերում կոյուղու արտաքին դիտահորերի տեղադրում - 56 հատ

15. Բակերում կոյուղու արտաքին դիտահորերի վերանորոգում - 277 հատ

16. Տանիքների սև թիթեղից ծածկերի ներկապատում - 7350 քմ

17. Վերելակների նորոգում - 3 հատ

18. Մուտքերում ապակեպատում - 580 քմ

19. Ե/բ պատերի սալերի միացման կարերի հերմետիկացում հիդրոմեկուսացնող

նյութով - 15800 գմ

Նախնական հաշվարկներով նշված աշխատանքների համար անհրաժեշտ է 1.2մլդ դրամ:

2. ՓՈՂՈՑՆԵՐ, ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ

Սևան համայնքի փողոցների և ներհամայնքային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 61524 մետր՝ 561243 քմ ընդհանուր մակերեսով:

Դրանցից ասֆալտապատ են 37558 մետր փողոցները և ներհամայնքային ճանապարհները՝ 386997 քմ ընդհանուր մակերեսով, իսկ 23996 մետր երկարությամբ և 174246քմ ընդհանուր մակերեսով փողոցները և ներհամայնքային ճանապարհները գրունտային են: Համայնքի հրապարակների զբաղեցրած մակերեսը կազմում է 12010քմ, որը ասֆալտապատ է:

Համայնքի ասֆալտապատ մայթերի ընդհանուր մակերեսը կազմում է 322610քմ:

Բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատ տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 60000քմ:

Փաստորեն, Սևան համայնքի ասֆալտապատ տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 781617քմ:

Նոր կառուցապատման ենթակա են 23996 մետր երկարությամբ և 174246քմ ընդհանուր մակերեսով փողոցներ և ներհամայնքային ճանապարհներ:

Նախնական հաշվարկներով նոր կառուցապատման ենթակա փողոցների և ներհամայնքային ճանապարհների կառուցման համար անհրաժեշտ է 1.7մլրդ. դրամ, իսկ առկա ասֆալտապատ տարածքների վերանորոգման համար՝ 1.0մլրդ դրամ:

3. ԱՆՁՐԵՎԱՋՐԵՐԻ ՀԵՌԱՑՄԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Սևան համայնքի անձրևաջրերի հեռացման ցանցերը կառուցվել են 1960-70թթ., որոնց ընդհանուր երկարությունը կազմում է 12.0 կիլոմետր:

Շահագործման տարիներին դրանք վերանորոգման չեն ենթարկվել, որի հետևանքով ներկայումս չի գործում շուրջ 7կմ-ոց հատվածը:

Ցանցերի կառուցման ժամանակ օգտագործվել են Դ=500-1500 մմ տրամագծով երկաթբետոնյա խողովակներ:

Մանրամասն գույքագրման արդյունքում պարզվել է, որ քաղաքի անձրևաջրերի հեռացման ցանցի վերանորոգման և վերագործարկման համար անհրաժեշտ է 120 մլն դրամ:

4. ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐ

Սևան համայնքում գործում են թվով 12 կրթամշակութային օբյեկտներ՝ 5 մանկապարտեզ, երաժշտական դպրոց, մշակույթի կենտրոն / արվեստի դպրոց, գրադարան /, Գոմաձորի, Ցամաքաբերդի, Գագարինի ակումբները, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն, մարզադպրոց:

Դրանցից խիստ հիմնանորոգման կարիք ունեն թիվ 1 «Բողբոջ», թիվ 2 «Զարթոնք» մանկապարտեզների, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի շենքերը, քաղաքային մշակույթի կենտրոնը, Գագարինի, Ցամաքաբերդի և Գոմաձորի ակումբները, որոնք չեն վերանորոգվել շահագործման օրվանից / շուրջ 40-60 տարի / և գտնվում են անմխիթար վիճակում:

Երաժշտական դպրոցի շենքը հարմարեցված է / նախկին մանկապարտեզի շենք / և ունի 3-րդ աստիճանի վնասվածության տեխնիկական եզրակացություն:

Նշված կազմակերպությունների հիմնանորոգման համար անհրաժեշտ է առնվազն 660 մլն. դրամ:

5. ԴՊՐՈՑՆԵՐ

Սևան համայնքում գործում է ութ դպրոց, որից մեկը՝ ավագ, 4-ը՝ հիմնական / թ.թ. 1, 2, 3, 4 / 3-ը՝ միջնակարգ / Գագարին, Գոմաձոր, Ցամաքաբերդ /:

Դրանցից մասնակի վերանորոգման է ենթարկվել միայն թիվ 1 հիմնական դպրոցը, մնացած բոլոր դպրոցները ընդհանրապես չեն վերանորոգվել և գտնվում են անմխիթար վիճակում:

Անհետաձգելի հիմնանորոգման են ենթակա հատկապես տանիքները, ջրհորդանները, ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը, սանհանգույցները:

Գրեթե բոլոր լուսամուտները միաշերտ են: Մեծ ծավալի աշխատանքներ պետք է կատարվեն հատակների, ցանկապատերի վերանորոգման, բակերի բարեկարգման ուղղությամբ:

Գագարինի միջն. դպրոցը ունի վնասվածության աստիճան:

Նախնական հաշվարկներով համայնքի դպրոցների հիմնանորոգման համար անհրաժեշտ է շուրջ 900 մլն. դրամ:

6. ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑ

Սևան համայնքում արտաքին լուսավորություն չունեն Հրազդան, Մյասնիկյան, Իսահակյան, Սպանդարյան, Ռուսական, Թումանյան, Դեմիրճյան, Աբովյան, Բաբաջանյան, Կոմիտաս, Էներգետիկների, Գործարանային, Հովի. Շիրազ, Ձկնորսներ, Ելենովկա, Գեղամա, Օրբելի, Աշոտ Երկաթ, Բարեկամություն, Քըրք Քըրքորյան, Մաշտոցի, Տիգրան Մեծ, Ռաֆֆու, Այվազովսկի, Մանթաշովի, Լճափնյա, Տերյան, Ֆրանսիական, Արա Գեղեցիկ, Հանգստի գոտի 5, Կոմիսարներ, Խորհուրդներ, Սունդուկյան, Փափազյան, Սևակ, Երիտասարդական, Գայի, Իսակովի, Մարզպետունի, Անկախության, Նավավարների, գ. Գագարին՝ / Գայի, Գործարանային, Կոմիտաս, Թումանյան, Պիոներներ, Երիտասարդական, Բաղրամյան, Շիրազ / փողոցները, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 35 հազար մետր:

Այդ փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման համար անհրաժեշտ է 880 հատ հենասյուն, 75000 մետր հաղորդալար, 880 լուսամփոփ, 35-ական էլեկտրական թողարկիչ, էլ. հաշվիչ, ժամային ռելե, բաժանարար տուփ:

Անհրաժեշտ է կահավորել 35 սնուցման աղբյուր:

Նախնական հաշվարկներով, այդ աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է մինչև 350 մլն. դրամ:

7. ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

Սևան քաղաքում վերջին բազմաբնակարան շենքը կառուցվել է 1990 թվականին: Սակայն, դրանից հետո համայնքում տարեկան կազմավորվել է 200-300, ընթացիկ տարում՝ 233 երիտասարդ ընտանիք:

Նախնական հաշվարկներով ներկայումս Սևան համայնքում ավելի քան 200 երիտասարդ ընտանիք հանարավորություն, ցանկություն և կարիք ունի ընդգրկվելու հանրապետության մարզերում իրականցվող «Բնակարան երիտասարդ ընտանիքներին» ծրագրում, որը, բնականաբար, կկանխի արտագաղթը և կնպաստի բնակչության աճին:

ՀՐԱՏԱՊ 2 ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒՐԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ /2013-2015թթ./

1. **Փողոցներ, ներհամայնքային ճանապարհներ**

Սևան համայնքի թիվ 1 օրակարգային խնդիրը համայնքի փողոցների, ճանապարհների, հրապարակների և բակային տարածքների առկա անմխիթար վիճակն է:

Համայնքի փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 61.5 կմ, ընդհանուր մակերեսը՝ 561.2 հազար քմ:

Համայնքի հրապարակների զբաղեցրած մակերեսը կազմում է 12.0, մայթերինը՝ 32.2 հազար քմ, բազմաբնակարան շենքերի բակային տարածքները՝ 60 հազար քմ:

Ուրիշ խոսքով համայնքի ասֆալտապատ տարածքները կազմում են 78.1 հեկտար:

Համատարած ասֆալտապատման վերջին աշխատանքները Սևանում կատարվել են 1990-1993թթ.: Դրանից հետո կատարված մասնակի փոսային նորոգումները բնականաբար վիճակը չէին կարող փոխել: Արդյունքում, Սևան քաղաքի, ինչպես նաև Գոմաձոր, Ցամաքաբերդ թաղամասերի և Գագարինի թվով 80 փողոցներից 69-ը ներկայումս անանցանելի են և այլևս փոսային նորոգման ենթակա չեն:

Հաշվի առնելով հիմնախնդրի ծավալները, առանձնապես կարևորում ենք Սևան քաղաքի Գրիբոյեդով և Սարգիս Սևանեցի փողոցների հիմնանորոգումը, որոնք քաղաքի թվով 6 միկրոթաղամասերի հետ կապող միակ ճանապարհներն են: Ի դեպ նշված 6 թաղամասերում բնակարանների թիվը հասնում է 1816-ի, բնակիչների թիվը՝ 7500-ի կամ համայնքի բնակչության շուրջ մեկ երրորդը:

Ընդորում, Գրիբոյեդով փողոցի ընդհանուր մակերեսը կազմում է 3550, Սարգիս Սևանեցի փողոցինը՝ 6500 քմ, կամ երկուսը միասին՝ համայնքի ճանապարհների ընդամենը 2 %-ը:

Սևան քաղաքի և տարածաշրջանի գյուղերի միջև բնականոն տարանցիկ կապ հաստատելու համար բացառիկ նշանակություն ունեն նաև Հրազդանի և Չարենցի փողոցները, որոնց միայն երթևեկելի մակերեսները կազմում են, համապատասխանաբար, 11.0 և 16.3 հազար քմ: Ի դեպ Չարենց փողոցի վրա են գտնվում քաղաքի թիվ 4 հիմնական դպրոցը, արհեստագործական ուսումնարանը և ավագ դպրոցը:

2. **Բազմաբնակարանային բնակֆոնդ**

Սևան համայնքի բազմաբնակարանային բնակֆոնդը կազմում է 213 բազմաբնակարան շենք, որը ամենախոշորն է ՀՀ Գեղարքունիքի մարզում:

Բազմաբնակարան շենքերի բնակարանների թիվը կազմում է 5751, ընդհանուր մակերեսը՝ 366279քմ:

Շենքերի շահագործման ժամկետը 40-70 տարի է:

Հատկապես մտահոգիչ է և առաջնահերթ՝ տանիքների վիճակը, որոնցից առնվազն 180-ը ենթակա են անհապաղ հիմնանորոգման, հակառակ դեպքում, համայնքում տարեց-տարի ավելանում են վթարային շենքերի թիվը, քանի որ տանիքների անմխիթար վիճակի պատճառով ընթանում է շենքերի կոնստրուկտիվ էլեմենտերի ինտենսիվ քայքայման պրոցես:

Ի դեպ, Խաղաղության 16, Սայաթ-Նովա 19, Նաիրյան 4, Գայի 1 բազմաբնակարան շենքերն ունեն 3-րդ աստիճանի վնասվածություն, իսկ Նալբանդյան 36-ը 4-րդ աստիճանի վթարային է / քանդման ենթակա /:

Սևան քաղաքը մարզի միակ համայնքն է, որն ունի 9 հարկանի պանելային բազմաբնակարան շենքեր՝ թվով 27-ը, որոնք ունեն վերելակներ և աղբամուղեր և որոնց սպասարկումը պահանջում է լրացուցիչ մեծ ծավալի ծախսեր:

Սևան քաղաքի առջև ծառացած հիմնախնդիրները անհնար է լուծել համայնքի ֆինանսական սուղ միջոցների հաշվին, հետևյալ հիմնավորվածությամբ:

Համայնքի բյուջեի կառուցվածքը վերջին երեք տարիներին ունի հետևյալ պատկերը.

մլն. դրամով

Հ/Հ	Համայնքի բյուջեն և նրա կառուցվածքը	2013թ. փաստացի	2014թ. փաստացի	2015թ. պլան
1	Ընդամենը համայնքի բյուջե, որից	445.8	468.0	546.1
1.1	Վարչական բյուջե	427.1	457.5	491.1
	Այդ թվում			
	դոտացիա և սուբվենցիա	315.4	332.4	361.6
	սեփական եկամուտներ	109.0	115.4	120.0
1.2	ֆոնդային բյուջե	18.7	10.5	55.0

Հայտնի է, որ բոլոր տեսակի կապիտալ ծրագրերը լուծվում են ֆոնդային բյուջեի միջոցներով կամ վարչական բյուջեի պահուստային ֆոնդի հաշվին / վերջինիս առավելագույն չափաքանակը որոշված է օրենքով՝ վարչական բյուջեի եկամուտների 20.0 տոկոսի չափով /:

Սևան համայնքում ֆոնդային բյուջե չի ձևավորվում օտարման ենթակա հողի, հիմնական միջոցների բացակայության հետևանքով: Միակ աղբյուրը մնում է վարչական բյուջեի

պահուստային ֆոնդը, որը ըստ տարիների առավելագույնը կկազմեր 2013թ-ին 85.4 մլն., 2014թ-ին՝ 91.5 մլն. դրամ, իսկ 2015թ-ի պլանը կազմում է 74.5 մլն. դրամ: Ստացվում է, որ համայնքի բյուջեի ձևավորումը գործող օրենսդրությամբ, չի կարող գոնե մեկ հիմնախնդիր լուծել: Միակ ճանապարհը այլընտրանքային լուծումներն են:

Սևան համայնքի բյուջեում անգամ չի կարող ստեղծվել առավելագույն վարչական բյուջեի պահուստային ֆոնդ, որովհետև վարչական բյուջեի ծախսերի կառուցվածքը այնպիսին են, որ թույլ չեն տալիս այդ միջոցներից ուղղել կապիտալ ծրագրերի կատարմանը:

Միայն տարեկան աշխատավարձի ֆոնդը կազմում է վարչական բյուջեի ծախսերի 56.0 տոկոսը / 275.0 մլն. դրամ /, 16.3 տոկոսը կամ 80.0 մլն. դրամը կազմում է համայնքի փողոցների սանիտարական մաքրման, արտաքին լուսավորության ծախսերը, 15.2 տոկոսը կամ 74.5 մլն. դրամը պահուստային ֆոնդը, 12.5 տոկոսը կամ 61.6 մլն. դրամը այլ ծախսեր:

Չնչին բացառությամբ, համայնքի բոլոր համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների օգտագործման ենթակա գույքը վերջին 25 տարում չի թարմացվել, նորը չի գնվել, համայնքի բյուջեի հաշվին ոչ մի կապիտալ վերանորոգման աշխատանքներ չեն իրականացվել:

Համայնքի բյուջեում տարեցտարի պետական բյուջեից հատկացվող դոտացիայի, սուբվենցիայի ավելացումը չի ծածկում անգամ նվազագույն աշխատավարձի բարձրացման ծախսերը:

Համայնքի կազմակերպություններում աշխատողների 95.0 տոկոսը ստանում են միայն նվազագույն աշխատավարձ: Ստացվել է այնպես, որ տնօրենի, մանկավարժի աշխատավարձը գրեթե հավասարվել է պահակի, հավաքարարի աշխատավարձին:

Արդյունքում առաջացել է խոշոր ճեղքվածք, ֆինանսական սուղ հնարավորությունները թույլ չեն տալիս նորմալ աշխատավարձ վճարել աշխատողներին, ձեռք բերել, թարմացնել հիմնական միջոցները, վերանորոգել շենքերը, իրականացնել անգամ նվազագույն ծրագրեր:

Վերևում թվարկված ծրագրերը անհնար է իրականացնել համայնքի բյուջեի միջոցներով:

Այս ամենին գումարվել են նախկինից եկած պարտքերը: 2013թ. հունվարի 1-ի դրությամբ առկա էր 105.3 մլն. դրամի ընդհանուր պարտք, որից 33.0 մլն. դրամը՝ աշխատավարձ, 55.6մլն. դրամը՝ փոսային նորոգումների գծով:

2013- 2015թթ. ընթացքում մարվել է տեղափոխված պարտքերից 68.5 մլն. դրամը:

2015թ. հուլիսի 1-ի դրությամբ պարտքերը կազմում են 53.1 մլն. դրամ, այդ թվում՝ 9.3մլն. դրամ աշխատավարձի գծով, 27.5 մլն. դրամը՝ փոսային նորոգումների, որոնք տեղափոխվել են 2012թ-ից:

<u>ԵԶՐԱՓԱԿՈՒՄ</u>